Լրացուցիչ ցուցումներ փոխադրության տրված տեքստի բովանդակային բաղադրիչի ստուգման վերաբերյալ

Աշխատանքի բովանդակային բաղադրիչը գնահատելու համար խորհուրդ ենք տալիս ուշադրություն դարձնել **ընդգծված նախադասությունների**՝ աշակերտի շարադրանքում առկայությանը կամ բացակայությանը:

Մասնավորապես, տեքստի գեղարվեստական, ենթատեքստային, հեղինակի ասելիքի բացահայտման համար առանձնահատուկ արժեք ունեցող մտքերի (տեքստում ընդգծվածների)՝ աշակերտի շարադրանքում իսպառ բացակայության (չվերարտադրման) դեպքում խուսափել աշխատանքը բարձր միավորներով (18, 19, 20) գնահատելուց:

Փոխադրության տեքստը՝ համապատասխան ընդգծումներով

Ես սիրում էի նրան:

Ամեն անգամ, երբ նայում էի նրա զարմանալի պայծառ աչքերին, որոնց մեջ կարծես արևն էր վառվում, ամեն անգամ, երբ լսում էի նրա կենսաթրթիռ ծիծաղը, ինձ տիրում էր այնպիսի մի խենթ զգացում, որի ազդեցության տակ **պատրաստ էի գործել և՛ ամենամեծ առաքինությունը, և՛ ամենամեծ ոճիրը, միայն թե նա հրամայեր:**

Սիրո՞ւմ էր նա ինձ նույնպես՝ ես այժմ չգիտեմ, բայց այն ժամանակ լիովին հավատում էի, որ չի կեղծում, երբ հավատացնում էր, թե սիրում է, և երդվում էր, **թե մահն անգամ չի կարող անջատել մեզ իրարից:**

Այն ժամանակ վերջին կուրսի ուսանող էի և շուտով պիտի ավարտեի իրավագիտական համալսարանը: Ոգևորված այդ ապագայով և խրախուսված երջանիկ սիրով՝ բուռն եռանդով պատրաստում էի ավարտական աշխատանքս:

Եվ ահա վերջին գլուխներն էի գրում, երբ մի նամակ ստացա, որի մեջ ապշեցուցիչ անողոք անկեղծությամբ գրում էր նա, **որ իր սիրո նախկին հավաստիացումներն ընդունեմ իբրև ցավալի թյուրիմացություն** և աշխատեմ մոռանալ իրեն, որովհետև ինքն ուրիշի կինն է լինելու շուտով:

Սկզբում կարևորություն չտվի այդ նամակին. կարծում էի, թե մի կատակ է դա: Բայց հետագայում որքան եղավ նախ զարմանքս, հետո զայրույթս, ապա հուսահատությունս, երբ իրար հետևից գրած նամակներիս և հեռագրերիս ոչ մեկի պատասխանը չստացա: Ապա ստացա մի կարճ հեռագիր, որում գրում էր, որ ամուսնացել է: **Մի բառ միայն, ուրիշ ոչինչ:** Այդ հեռագիրն էլ երևի տվել էր նրա համար, որ այլևս չձանձրացնեմ իրեն նոր նամակներով ու հեռագրերով:

Հետո իմացա, որ մեկնել էր արտասահման իր շատ հարուստ ամուսնու հետ:

Ու եղավ մի բոպե, որ քիչ մնաց ձեռք բարձրացնեի ինքս ինձ վրա: Բայց հետո մտածեցի, որ այդ արդեն չափազանց փոքրոգություն կլիներ:

Հոգեկան այդ դրությանը հաջորդեց խիստ անտարբերություն ու անզգայություն դեպի ամեն ինչ:

Հինգ տարի անց փողոցում բոլորովին պատահական կերպով հանդիպեցի նրան: Սկզբում բնավ չճանաչեց ինձ: **Եվ չէր էլ կարող ճանաչել, որովհետև իր ճանաչած նախկին միշտ լավ հագնված գեղեցիկ ուսանողի փոխարեն այժմ տեսնում էր հնամաշ վերարկուով հարբեցողի:**

Այն սակավ ժամերին, երբ խմած չէի լինում և կարողանում էի քիչ թե շատ խորանալ մտքերիս մեջ, ինձ շատ էր մտատանջում այն հանգամանքը, թե **ինչն էր իմ այս վիճակի բուն պատճառը:**

Հանկարծ ձեռքս ընկավ իտալական մի սիրավեպ՝ «Վրեժ» վերնագրով՝ շատ նման իմ սիրավեպին: Միայն թե այստեղ ես էի՝ **իմ բուրժուական միջավայրի հարազատ ծնունդը, տաքուկ ապրելու սովոր, կամազուրկ,** որ առաջին իսկ հարվածից ընկնում է, որ այլևս չելնի, իսկ այնտեղ նա՝ աշխատավոր ժողովրդի ծոցից ելած թափառական մի պատանի՝ **իր միջավայրի երկաթակուռ կամքով,** որով զինված՝ ոչ թե ընկճվում է ինձ պես առաջին իսկ հարվածից, այլ հետզհետե բարձրանում է մինչև գլխապտույտ բարձունքները, որպեսզի վրեժ լուծի իր մարդկային արժանապատվությունն արհամարհողներից, իրեն նվաստացնողներից: